



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԱԹՈՒԼԻԿ ՄԱՐԴՈՐՍՆԵՐԸ ԳՈՐԾԻ ԵՆ ԱՆՑԵԼ



մեն անգամ, երբ Բաղախական հորհրդանի վրա սևաբայր ամպեր են կուտակվում, երբ հայ ժողովրդի այս կամ այն հատվածը կանգնում է փորձության առաջ, կարողիկ կղերն անմիջապես գործի է անցնում և վերսկսում իր մարդորսության ֆարոգները հայ համայնքներում: Գործի են դրվում պրոպագանդայի մեխենան, բռնությունը. հավատացյալների տնտեսական խեղճության ամենաանխիղճ շահագործումը և եզվիտական բազմաթիվ այլ միջոցներ, որոնք դարերի ընթացքում մշակելի և կատարելագործելի է կատիկանը: Այդ մասին փաստեր որևէ ուզե՞լ կարելի է բերել բազմաշարշար հայ ժողովրդի պատմությունից: Բավական է բնկուզ հիշել առաջին Համաշխարհային պատերազմի ծանր տարիներին Տեյր-էզ-Ջորի անասատներում արյուն-արցունքի մեջ քարայված սովամահ հայ գաղթականների մոտ «մխիթարություն» գնացած կաթալիկ կղերականների վարմունքը — խոստանալ օգնել գաղթականներից միայն նրանց, ովքեր կարողիկ են և կամ կլիստանան դավանափոխ լինել և կաթալիկ դառնալ: Ոչ պակաս ուսանելի է երջանկանիշատակ երիմյան Հայրիկի և Իզմիրյան կաթալիկոսների նամակագրությունը՝ կապված կաթալիկ մաքորսության հետ կիրիկիայում, որը ապագրվում է մեր ամսագրի ներկա համարում:

Պետությունների միջև գոյություն ունեցող Բաղախական ներկա լարված իրադրությունը բնական է, չէր կարող վրիպել, և, զավ ի սիրտ պիտի ասել, չվրիպեց Կաթալիկ նկեղցու պետերի, առանձնապես, պապից ավելի պապական հայ կաթալիկ առաջնորդների ուշադրությունից: Եվ անա վերջերս, Մխիթար Արքայի և Աբրահամ Առծիվանցի մահվան

200-ամյակի առիվ, հատուկ շնորհակալությամբ հանդես է եկել Կաթալիկալ Աղաջանյանը և ցանկանալով, ինչպես ինքն է ասում, կատարել իր ճնովական պաշտոնի մեծ պարտականություններն մեկը («Ավետի», 1950 թ., VII—VIII, էջ 107), առաջարկել է հայ ժողովրդին «վերացնել պատկան միջնորմը», բողբել իր ազգային նկեղցից և կաթալիկությունը բնզուներ: «Արահամ Կաթալիկոսի և Մխիթար Արքահոր երջանիկ մահվան երկրորդ հարյուրամյակին աթիվ,— գրում է նա,— պարտքը կզգանք անոնց պատգամաբերն ըլլալու և, կրոնական ստակետն շփոյթ ու մոռայ այս պահուս, անոնց կողմն հրավեր կաղալու բովանդակ հայության՝ դառնալու նախնայաց ամբողջական լույս հավատիին, կաթալիկե (իմա՛ կաթալիկ.—ԽՄԲ.) միության մեջ»:

Կարյիկալ Աղաջանյանի այս շնորհակալությամբ արդարացի գայրույթ ու վրդովմունք է առաջացրել ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Ս. նկեղցու հավատացյալների, այլև հայրենասեր հայ կաթալիկների ջրանում: Բոլորն ակնբախ տեսնում են Բրիտանյա նկեղցիների՝ Հայաստանյայց նկեղցու և Կաթալիկ նկեղցու պետերի պարզ նկարագիրը և նրանց տրամագծորեն հակառակ մտեցումը՝ Բրիտանյա նկեղցիների համագործակցության խնդրում: Ամենայն Հայոց Կաթալիկոս Լորին Ս. Օծուրյուն Գեորգ Զ-ը, առաջնորդվելով Բրիտանյանի պիտու և եղբայրության բաժն գաղափարներով, հայտարարում է Բուր նկեղցիներին, որ շնորհ նկեղցիին Բրիտանյա ժողովանցի ժողովներից մեկն է, որը պանելով իր ուրայն գույնը և հոտը, միշտ պատրաստ է եղել և այժմ պատրաստ է Բրիտանյանական վեճ գաղափարների կենսագործման համար համագործակցել բոլոր նկեղցիների նետ...» («Էջմիածին», հուլիս-օգոստոս, 1950 թ.). իսկ

Կարողիկ եկեղեցին ոչ միայն համագործակցության հայելու չի աճում, այլև հարմար առիթի փնտրում հայաճումն իր Կարդինալի ձեռնով սուրբ իր տոյբ եկեղեցու կողք խրելու համար...

Արտասահմանի հայ մամուլը «ծիրանավոր» ին պատշան հակահարված տվել է մերկացնող հողավածներ են գրել գերաշնորհ Տ. Գարեգին արևելահայտաբան հաշատրյանը, հոգևորական Ս. Նդիշև վարդապետ Տերտերյանը, գերաշնորհ Ս. Գերեզյան եպիսկոպոս Փոլսոյանը և աշխարհիկ մտավորականներ: Քննադատական այդ հողավածներից մի Լաբուս արտասույվում են մեր ամսագրի երկուս համարում:

Կարողիկ ամբարիշտ առաջնորդների մեղքով Ափսոսում ծավալված այս անգույտ վեր շխորացնելու համար, զուցե հարկ չի ենք անդրադառնալ Կարդինալ Աղաջանյանի «Հովվական քույր» ին և քողել սնուչադրության, ինչպես անուշադրության քողովեցին նույն կարդինալի նման կարգի խոսվածույլ այլ «քույր» ին ևս, սակայն եկատի ունենալով, որ կարսիկ կրեականները ի չար են գործ դնում Ամենայն Հայոց Հայրապետի մեծահոգի և լայնախոհ վերաբերմունքը և շարունակում անարգել իրենց մուրեցուցիչ պրոպագանդան, ուստի և անհամբշտ են համարում անդրադառնալ Աղաջանյանի այլ «Հովվական քույր» ին՝ առաջնորդվելով Առնոստոս Կաթողիկոսի այն խորհրդով ի չար՝ «Տուրեմ» (այսինքն անգղամին. — ՍՄՊ.) պատասխանի բառ անգղամուրեքան նորա, գի մի՛ յիմաստնագոյն երեսցի յանձն իս» (Գիրք առակաց, ԻՁ. 5):

Կարդինալ Աղաջանյանն իր «Հովվական քույր» ին նպատակ ունենալով վատաբանել Հայ եկեղեցուն, նախ նրան աշխատում է ներկայացնել որպես ոչ տիեզերական, ընդհանրական եկեղեցի: Այդ կապակցությամբ նա ստուգաբանում է «տիեզերական», «ընդհանրական», «կաթողիկե» բառերը և ցույց տալով նրանց ինչ կապակցությամբ գործածվելը Հին և Նոր Կտակարաններում, առաջնական թղթերում և վաղ Բրիտանյա հայրերի աշխատություններին մեջ, գաղթն է անվերապահ այն երակացության, որ «Հռոմեական Կաթողիկե եկեղեցին է Բրիտանեական Տիեզերական եկեղեցին», իսկ մյուս բոլոր եկեղեցիները, այդ թվում և Հայոց եկեղեցին, շեղվել են Բրիտանեական Տրմաբիտ ուղուց:

Աղաջանյանի այս մեղադրանքը նորություն չէ: Այդ նույն բանը, առաջ մազաչափ տարբերության, հագառ անգամ ասել են միջին դարերում Արևելքում շրջող պապական եզվիտ Լաբոգիները, ասել են առանց կովանների, ասել են առանց խղճամիտ հա-

յագետներին ականգ դնելու: Եվ Կարդինալ Աղաջանյանը, որպես մոլի պապական, որ մեծացել է Հռոմում, մարզվել եզվիտ պրոպագանդիստների համալսարանում և կարդինալության աստիճանի հասել պապի ոտները խոնարհաբար համբուրելով, ստրկուրեն կրկնում է իր լծակից եզվիտներին: Նա չի ուզում ըմբռնել, որ վաղ Բրիտանյա եկեղեցիները — միասնական, ընդհանրական եկեղեցի են եղել, որ նրանց միջև գոյություն չի ունեցել պատակտում և անմիաբանություն: Բրիտանյա եկեղեցու մեջ առաջին խոշոր պատակտուր տեղի ունեցավ IX դարում, Փոտ պատրիարհի ժամանակ, երբ Հռոմեական եկեղեցին բաժանվեց Ընդհանրական եկեղեցուց, և կազմեց, այսպես կոչված, «Արևմտյան հերձվածք»: Եվ էրե այսօր հարկ կա ընդհանրականությունից դուրս եկած և ընդհանրականությունը բռնապետության վերածած եկեղեցի փնտրել — այդ, աշխարհը պիտի, որ Պապական եկեղեցին է: Աղաջանյանը մոռանում է, որ Բրիտանեական եպիսկոպոսի «կաթողիկե» բառը շատ վաղուց է կորցրել իր առաջվա պարզ իմաստը:

Կարդինալ Աղաջանյանը իր «Հովվական քույր» ին կրկնում է կարողիկ միսիոնարների հանկերգը՝ Հռոմի արքայ գերագահության և Պետրոսի առաքելապետության մասին: Հիսուսը, գրում է «ծիրանավոր», հատկապես աղոթած էր Ամեն Պետրոսի համար, գոր պիտի կարգեր հովիվ բովանդակ հավատացյալ իր հոտին և հաստատիչ առաքելական դասուն»:

Այս հարցին իր ժամանակին մանրամասն անդրադարձել է Օրմանյան սրբագանը և անհերքելի փաստերի հիման վրա ցույց տվել, որ Պետրոս առաքյալին նախապատվություն տվող և մարդկությունը իրկությունը Հռոմի հետ կապող Պապական եկեղեցու այս տեսությունը — գոնեիկ աղետամուն է Բրիտանեական անաղատ վարդապետության և Բրիտանի Բարոզած Լեդայություն սուրբ գաղափարի: Մատրևոս ավետարանչի վկայությամբ, աշակերտների մեջ երբ վեն է ձագել՝ թե ո՞վ պիտի լինի առաջինը և ո՞վ՝ վերջինը, Հիսուսը կտրուկ հայտարարել է. «Որ կամիցի ի ձեռք առաջին լինել, եղիցի ձեզ ծառայ»:

Պապական եկեղեցու տեսությունը միանգամայն հակադիր է ավետարանական վերսբերված հավասարության սկզբունքին: Քաղկեդոնի մեզ հարցնել Աղաջանյանին — կարդյո՞ղ նմանություն աշակերտների ոտները լվանալով խոնարհություն ցույց տվող Բրիտանի և ոտները հավատացյալներին համբուրել տվող Պետրոսի հաջորդ գահակալների միջև: Կարդյո՞ղ նմանություն խեղճերին, հարցտահարվածներին պաշտպանող, հիվանդ-

ներին առողջություն վաղ Քրիստոսի և խառնակների վրա գիտության մարդկանց կենդանի-կենդանի այրող ռիսակալ Պետրոսի գահակալների միջև: Կա՞ր առողջ մեծություն այստեղից խաղաղություն ֆարգող Քրիստոսի և պատերազմի ջերմ կողմնակից Պետրոսի ռազմատենչ գահակալների միջև...

Ավելի քան անհրաժեշտ է Աղաքանյանի այն պնդումը, որ իբր Հայոց Եկեղեցին նախապես կարողիկ է եղել Գրիգոր Լուսավարչից սկսած Քրիգոր Լուսավորիչը ճիմենց Հայ եռաձին Եկեղեցին Պետրոսի վրա,—հայտարարում է նա: Նրա պնդումով, կարողիկ են եղել Նեսես Մեծը, Ստեփանոս Պատրիարքը, և րեդիանրապես, ողջ Պահլավունիների և Պարթև հայրապետական շարժերը: Նա նշում է նաև, որ միջին դարերում «օտարացել և այլապաճան իշխանավորները հարկադրել են Հայոց Եկեղեցուն բաժանվել հռոմեական ժայռից և առանձնանալ: Կարողիկության պատմականությունը Հայաստանում շեշտովու համար, Աղաքանյանը հասել է մինչև այնպիսի անհրաժեշտության, որ հայտարարում է թե՛ Հայ ազգը ծնած է քրիստոնեության կարողիկեության մեջ:

Կարողիկալ Աղաքանյանը, ինչպես երևում է, առանձնապես չի փայլում խորը իմացությամբ պատմության ասպարեզում, այլապես նա բույլ չէր տա արտառոց և կոպիտ սխալներ: Նշենք նրանցից մի ֆակտը.

1) Հայ ժողովուրդը իր ծնունդը, որ նույն է՝ իր արչարարը չի սկսել քրիստոնեությունից, այլ նրանից առաջ, երկար դարեր, հեթանոս է եղել:

2) Հայոց Եկեղեցին իր սկզբնավորությունը չի սկսել Գրիգոր Լուսավորչից, այլ՝ թաղեոս և Բարբողիմեոս առաջյաններից (Պետրոսի մասին խոսք անգամ չիմել չի կարող):

3) Լուսավորիչը, Հայաստանյայց Եկեղեցու խոշորագույն սուրբը, Հայոց Եկեղեցում մեծարվում է Տրդատի ձեռնավորությամբ քրիստոնեությունը Հայաստանում պատմական կրոն դարձնելու և Միաձնաչ Տաճարը կրթնելու նամար:

4) Հայոց Եկեղեցին մաղ դարերում ոչ մի կապ չի ունեցել Պապական Եկեղեցու հետ և, րեդիանրապես, այդ ժամանակ Բեդիանրական Եկեղեցու մեջ գեղուս բաժանում գոյություն չի ունեցել:

5) Կարողիկները առաջին անգամ իրենց մարդոսական ֆարգեհեռով փորձեցին հայոց մեջ բափանցել XIII դարից, բայց հաջողություն չունեցան:

6) Այդ դարում, եզրվառների կողմից շինվեցավ «Բայանց բուրբ» կոչվող կեղծ վավերագիրը՝ Հայոց և կատինական Եկեղեցու միջև իբր թե կնկված դաշինքի մասին:

7) Եվ, վերջապես, միայն XVIII դարում

վատիկանին հաջողվեց Հայ Եկեղեցու փառախից մոլորված Մխիթար Աբբայի և Աբրահամ Արծիվյանի ջանքերով, որոնց Կարողիկայր համարում է «ամուլի հաւատոյց» հայրենայն (1), հայկական փոքրիկ համայնի ստեղծել, ապօրինի պատրիարխություն և կարողիկություն ստեղծել և լծել նրանց պայմարի Հայոց Մայր Եկեղեցու դեմ:

Բայց այս ամենը ուղղամիտ պատմաբանները գրել, ասել են: Եվ Աղաքանյանը էրեցանկանում է շմեղանել պատմության դեմ, պիտի ծանոթանա պատմության սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հետ, և ոչ թե աղբյուրներն աղավաղելով՝ աշխակապությամբ գրադվի:

Հայաստանյայց Եկեղեցին չմիանալով Կարողիկ Եկեղեցուն, օգտվել է, թե տուժել:— իր Հնովական բուրբի մեջ Կարողիկալ Աղաքանյանն աշխատել է պատասխանել այս հարցին Լս: Նա կեղծ հայրենասիրությամբ կոկորդիլոսի արցունք է քափում հավատացնելու համար, որ իբր թե նա ժողովուրդը տուժել է, շատ է տուժել կարողիկ շինելու պատճառով. «Ավա՛ղ, շատ ավելի երկար շրջաններ հայ ժողովուրդը ապրեցավ և կապրի տակավին իր ստվար մեծամասնությամբ բաժանումի գառն իրականությունը... Սակայն անաշտ պատմությունը արձանագրած է՝ թե Հայ ազգն ու Եկեղեցին ո՛րքան տուժեցին այդ պատճառով... բոլոր բարիքները և առավելությունները ի նպաստ հայության հեռավոր պիտի բլլա՛ծե՞նք բերել—առավելյո՞ք հաճախե՞նք—երես ան կարողիկե միության մեջ մնացած ըլլա՛ր...»:

Կարողիկալի այս տողերը վրդովմունք կարող էին առաջացնել մեր պատմության հետ ամենադալյոց իսկ չափով ծանոթ անձնավորության մոտ: Ինչից է շատ տուժել Հայաստանյայց Եկեղեցին—կարողիկների մոտենալուց, թե հեռանալուց, և ո՛վ է մեծ վիշտ պատճառել թագմաչարչար հայ ժողովրդին և Հայաստանյայց Եկեղեցուն— ուրիշները, թե հենց նույն կարողիկները:

Հայ կարողիկ համայնքի առաջացումը ինքնին մի ժահրատ վեր է եղել բազմաչարչար հայ ժողովրդի մարմնի վրա: Կարողիկ Եկեղեցին սկիզբ դրեց հայոց անմիաբանության՝ Եկեղեցական ասպարեզում: Նա պատակեց հայ հասարակությունը և դուր բաց արեց օտարների առաջ: Հայ կարողիկ համայնքի կազմակերպումով իրականացավ Հայաստանի նկատմամբ քշնամական տրամադրված հռոմեական կայսրության դարավոր իղծը, որի ֆաղափակեությունը նշանաբունն է եղել դառեր շարունակ՝ «Թաժանեսա՛, զի տիրեցես»:

Եվ շատ ժամանակ շանցավ, որպեսզի հայ ժողովուրդը աչքով տեսնի կաթոլիկ մարդարսների գործնական գրառիւմները: Կարողիկներն, իրենց ձեռքն առած հայ դավանափոխ հավատացյալներին ամեն կերպ աշխատեցին կտրել իրենց Հայրենիքից, իրենց հայրենի սովորություններից, սառը ջուր լցրին նրանց հայրենասիրության վրա և բռնության ու տեսակ-տեսակ խարդավանեցին հարկադրեցին ձուլման ենթարկվել: Կաթոլիկության բարիքների մասին հառող Աղաջանյանը գիտի՝ արդյո՞ք լեհահայոց տխուր պատմությունը. Լեհաստանի մե՞ր երթմանի բազմաթիվ մշակույթով ծաղկուն գաղութը վատահամբավ նիկոլ Թորոսովիչի հարկադրանքով կաթոլիկությունն ընդունելուց և Մայր Եկեղեցուց հեռանալուց հետո, շնորհամեկո մի քանի տասնամյակների ընթացքում ձուլման ենթարկվեց և անհետադավ: Չե՞ն ուզում ուրիշ օրինակներ բերել. հանելի չէ բաց անել պատմության տխուր էջերը:

Կաթոլիկության կրոնական դաստիարակության ոգին ցայտուն պատկերացնելու համար, կուզեի՞նք ուսանելի մի օրինակ ևս չերել Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում Թյուրքիայում կոտորածի ժամանակ կաթոլիկ հայերից ոմանց ցուցաբերած վատագի վարմունից, որի մասին բազմիցս գրվել է արտասահմանյան հայ մամուլում:— Դանիելի առջև սպանելու համար տարված հայերի մեջ էղել են ազգուրաց փոքրոգի այնպիսի հայ կաթոլիկներ, որոնք չեն խղճահարվել հայտարարելու դանիելներին, որ իրենք սպանվող մյուս հայերի նման հայեր չեն, այլ կաթոլիկ, ուստի և պիտի սպանվեն: Այդ մի՞րե կարող է բույլ տալ, կամ երբեք բույլ է ավել տարբեր դավանանք ունեցող իր արյունակից եղբոր նկատմամբ Հայաստանյայց Եկեղեցու հորատ գավակը: Յուրաքանչյուր Եկեղեցու մեծությունը պիտի չափել ո՛չ թե իր հզորությանը, այլ բարոյական բարձր արժանիքներով: Եվ դրանով է, որ պարծենում է Հայաստանյայց Եկեղեցին:

Կարդինալ Աղաջանյանը, պարզամիտ հավատացյալներ որսալու համար, իր Հովվական բուրդի մեջ կանգ է առել նաև հայ կաթոլիկների մեր Եկեղեցու ծիսակատարություններով առաջնորդվելու փաստի վրա՝ լսությանը անցնելով Հայոց և Լատին եկեղեցիների էական արժանիքների վրալից:

Հայաստանյայց Եկեղեցու անուրանալի ամենամեծ արժանիքներից մեկը կայանում է նրանում, որ նա անխաղճի կայեղով կապ-

ված է իր ժողովրդի և իր սիրելի Հայրենիքի հետ, դարեր շարունակ անխախտ բայլել է նրանց հետ և աշխատել, կարյաց չարի, վառ պահել իր ժողովրդի հայրենասիրությունը: Իրան հակառակ, Կաթոլիկ Եկեղեցին մի՞շտ էլ աշխատել է զարկ տալ օտարամուրթյան, հայ հավատացյալների հայացքը կտրել հրենց Հայրենիքից և այն ուղղել դեպի Արևմուտք՝ դեպի Հռոմ, Աղաջանյանների «մայր քաղաք»:

Մեր Եկեղեցու հավատացյալի համար իր սրբություն արքայք հավերժական Արարատ և Արագած լեռների միջև վեհապատեհ բազմած Ս. էջմիածինն է եղել և է, իսկ Աղաջանյանների համար— մեր ժողովրդի գեմ անվերջ խարզավանեցող նյութող Հռոմը:

Մեր Եկեղեցին ցանկանում է սփռված հայերի ուշադրությունը կենտրոնացնել իրենց Հայրենիքի և նրա սրբությունների վրա, իսկ Աղաջանյաններն աշխատում են կտրել հայերին Հայրենիքից և նրանց հայացքն ուղղել դեպի Արևմուտք— օտար երկրներ:

Աղաջանյանի նման մի Կարդինալ, որ մինչև այն աստիճանի օտարացած է, որ խղճի խայր չի գգում իր Հովվական բուրդում պարծենալու այն մասին, որ չուր սարի առաջ իրավացի է եղել, որ թողք է գրել և փորձել է խանգարել Հայրենազարծությունը,— այլևս մեզ ասելիք չի մնում...

Կարդինալ Աղաջանյանն իր Հովվական բուրդի մեջ, սակայն, ավելի է առաջ դնացել, միամիտ մարդկանց որսալու համար նա որոշ խոստումներ է տվել, հավաստիացումներ արել. «Կաթոլիկությունը (այսինքն կաթոլիկությունը) չի կրեար բնավ վնասակար բլլալ հայության, այլ, ընդհակառակը, ապահովել գառ ամբողջական և անխախտ ստացումը Քրիստոսի վարդապետության և հախնյայց յուռալայձառ գաղափարականին, ՄԱԶՄԱԹԻՎ ՌԻՐԻՇ ՏԵՆԱԿԵՏՆԵՐՈՎ ԱԼ ՄԵՆԱՊԵՆ ՈԳՏԱԿԱՐ ՊԵՏԻ ՐԼԼԱ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՄԱՐԶԵՐՈՒ ՄԵՁ» (ընդգծումը մերն է.— ԽՄԲ.): Ըստ որում, Կարդինալն անորոշ չի թողնում և այն հարցը՝ թե ե՞րբ է որ շօզտակար պիտի բլլա, ե՞րբ է իրականանալու այդ ամենը, ե՞րբ պիտի Հայաստանում, ինչպես և Միլյուտում, վերջապես հաստատվի Հռոմի շուրք հավատքը:— Այդ, քառ Աղաջանյանի, հեռարվոր է լինելու այն ժամանակ, «ԵԲԲ ՇՇՄԱՐԻՏ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԸ ՀԸՆՁԵ» (ընդգծումը մերն է.— ԽՄԲ.): Այս հայտարարությունից անմիջապես հետո, սակայն, նկատում է «ծիրանավորք», որ իր այդ մտացածին հայտարարությունը կարող է

բեղունվել որպես «երազատեսի սին խոս-
 քեր», ուստի և նրանց ավելի նշանակություն
 սալու համար առաջարկում է իր հավատաց-
 յալներին շվեառել և սպասել, օրինակ բե-
 ՚րելով Գրիգոր Լուսավորչին, որը «տոր Վի-
 րապի մեջ անգամ շվեատեցավ մշակելն իր
 հսկա ծրագրերը: Ետ ժամանակների նոր
 Լուսավորիչ լինելու ձգտող Աղաջանյանը,
 ցանկալի է իմանալ, թե ո՞ր հոր Վիրապում
 է մտադիր մշակելու իր «հսկա ծրագրերը»:

Պապի ձիրանավորի վերև քերված խոս-
 տումները ֆազաֆական մարզի մեջ, նրա
 հայտարարությունն «ազատության ժամ»ի
 և «հսկա ծրագրեր»ի մասին — խիստ կա-
 րևոր և պատասխանատու հայտարարու-
 րություններ են: Տեղին է ՀՀասկ»ի խմբագրա-
 կանի այդ առթիվ արած ճեզեական հարցու-
 մը՝ «Ուրվայի»-ն խոստում է, թե նորին Վսե-
 մաբյան կարդինալը իր ձիրանիին մեջ ձվա-
 րած է հայ ժողովուրդի հավերժական փրկու-
 րյան դյուրական հուսուբքը...» (ՀՀասկ,
 1950 թ., № 12, էջ 364):

Բայց մենք ունենք մի այլ հարցում ևս. —
 Ի՞նչ սեփական են են, թե որն է մեկի տված
 հավաստիացումների հիման վրա են ձիրա-
 նավորի այդ հորդարուխ խոստումները, ա-
 ռանձնապես նրա խոստումները «ֆազաֆա-
 կան մարզ»ի մեջ: Նման խոստումներ անելու
 համար էիչ է բարձրաստիճան ճոզեռական
 լինել, պետք է լինել նաև պատասխանատու
 ֆաղաֆական և զինվորական գործիչ...:
 Անջուլտ, Սիլյուաֆի փոֆրաթիվ հայ կա-
 րոյիկների և զինական գործից անվարձ
 Վեներտիկի ու Վիեննայի մի ֆանի կրո-
 նավորների վրա չեն հիմնված նրա մեծա-
 պորոլ խոստումները: Չենք կարծում նաև
 նրա նաշիվները կառուցված լինեն Քյուր-

Նիայի վրա, շնայած քյուրֆամոլ կարդինալի
 պաշտոնաթերթը ֆազառիկ գովեստով է խո-
 սում քյուրֆ «ասկյաթ»ի ֆառեմասնություն-
 ների մասին, իսկ Քյուրֆիան զրկաբաց է
 ընդունել նրա այցելությունը կոստանդնու-
 պոլիս: Աղաջանյանը լավ գիտի, որ ինքը
 գործ ունի ո՞չ թե Քյուրֆիայի երբեմնի խնդ
 ու անպաշտպան հայկական խյակներ
 հետ, այլ 30 տարվա ընթացում արիացած
 հայ ժողովրդի հարազատ պետականության
 հետ, որն անբաժան մասն է Սովետական
 մեծ Միության: Ուստի և այդպիսի մի հզոր
 եղբի դեմ դուրս գալու և ֆաղաֆական նոր
 խոստումներ տալու համար, Աղաջանյանը
 պիտի որ որոշ հաշիվներ ունենար: Մենք ու-
 զում ենք իմանալ՝ ովքե՞ր են այդ խոստում-
 ները տվողները, ինչո՞ւ Աղաջանյանը ման-
 վածապատ է խոսում:

Մեզ համար կասկածից դուրս է, որ կա-
 դինալ Աղաջանյանի ձեռքը խառն է մեր
 ժողովրդի դեմ նյութով մի ինչ որ սե դավի
 մեջ: Մենք չենք կասկածում նաև, որ դավա-
 դիր այդ ջրջանն է Աղաջանյանին ըելա-
 պել՝ հանդես գալու մեծազորոզ իր խոս-
 տումներով:

Բայց հայտնի է արդյոք Աղաջանյանին
 մեր ժողովրդի բարոյական բարձր
 նկարագիրը: Ես գիտի՞ արդյոք, որ մեր
 սիրելի Հայրենիքին և Հայաստանյայց Ս. Ա-
 կեղեցուն վտանգ սպառնալու դեպքում, մեր
 բոլոր հայրենասեր մարդիկ, ո՞ր էլ գտնվե-
 լիս լինեն, ինչպիսի՞ ֆաղաֆական համոզ-
 մունք էլ որ դավանելու լինեն, անգամ հայ-
 րենասեր հայ կարոյիկները, պիտի միանան
 և միասնական ձեռով պիտի պայֆարեն մեր
 նվիրական Հայրենիքի ու հայրենի սրբու-
 րյունների բշնամիների դեմ:

